



Կարգապահական գործ թիվ ԿԳ-15106

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի
2015 թվականի հոկտեմբերի 16-ի թիվ 262-րդ նիստի

Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ ԿԳ/151-Ա

**ՓԱՍՏԱՔԱՆ ԽԱՆՈՒՄ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(ԱՆԴԱՄԱՎՃԱՐԻ ԳՈՐԾՈՎ)**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ նաև՝ Պալատ**) խորհուրդը (**այսուհետ նաև՝ խորհուրդ**), նիստը նախագահող՝ Մարտուն Փանոսյանի, խորհրդի անդամներ՝ Կարապետ Աղաջանյանի, Նելլի Հարությունյանի, Կարեն Մեծլումյանի, Սիմոն Բաբայանի, Լիպարիտ Սիմոնյան, Լուսինե Սահակյանի, Երվանդ Վարոսյանի, Ալեքսանդր Սիրունյանի, Տիգրան Խուրշուդյանի կազմով, քարտուղարությամբ՝ Նոննա Համբարձումյանի, քննության առնելով փաստաբան Խանում Մկրտչյանին (արտոնագիր թիվ 278) կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց՝

1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.

Համաձայն ՀՀ փաստաբանների պալատի գլխավոր հաշվապահի կողմից ՀՀ փաստաբանների պալատի նախագահին 18.07.2015թ. տրամադրված տեղեկանքի փաստաբան Խանում Մկրտչյանն ունի 10.000 (տասը հազար) ՀՀ դրամ գումարի չափով անդամավճարի մուծման չկատարված պարտավորություն՝ 2015թ. մայիս և հունիս ամիսների համար:

2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը.

20.07.2015թ. ՀՀ փաստաբանների պալատի նախագահի թիվ 230-Ա/ԿԳ-15106 որոշմամբ կարգապահական վարույթ է հարուցվել փաստաբան Խանում Մկրտչյանի նկատմամբ՝ «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 2.9.1 կետի խախտման հատկանիշներով:

21.07.2015թ.-ին կարգապահական գործը հանձնվել է Պալատի խորհրդին:

Խորհրդի նիստը տեղի է ունեցել 2015 թվականի հոկտեմբերի 16-ին, ժամը՝ 19:44-ին ՀՀ փաստաբանների պալատի վարչական շենքում (ք.Երևան, Զաքիյան 2, 4-րդ հարկ, թիվ 12 սենյակ):

3. Պատասխանողի համառոտ բացատրությունները.

Փաստաբան Խանում Մկրտչյանը թեև պատշաճ ծանուցվել էր կարգապահական

նիստի վայրի և ժամի մասին, սակայն Խորհրդին անհայտ պատճառներով նիստին չէր ներկայացել:

4. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ.

Պալատի խորհուրդն, ուսումնասիրելով գործում առկա գրավոր փաստաթղթերը, հաստատված է համարում հետևյալ փաստերը.

1) փաստաբան Խանում Մկրտչյանը փաստաբանական գործունեության արտոնագիր է ստացել 30.08.1996թ. (հաստատվում է Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից 15.10.2015թ. տրամադրված տեղեկանքով),

2) փաստաբան Խանում Մկրտչյանն ունի 10.000 ՀՀ դրամ գումարի չափով անդամավճարի մուծման չկատարված պարտավորություն՝ 2015թ. մայիս և հունիս ամիսների համար (հաստատվում է Պալատի գլխավոր հաշվապահի կողմից 18.07.2015թ. ՀՀ փաստաբանների պալատի նախագահին տրամադրված տեղեկանքով),

3) փաստաբան Խանում Մկրտչյանն իր անդամավճարի պարտքը չի մարել (հաստատվում է Պալատի գլխավոր հաշվապահի կողմից 16.10.2015թ. Խորհրդին տրամադրված տեղեկանքով):

5. Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները.

Պալատի աշխատակազմի ղեկավարի կողմից 15.10.2015թ. տրամադրված տեղեկանքի համաձայն Խանում Մկրտչյանի (արտոնագիր 278, ստացված՝ 30.08.1996թ.) նկատմամբ 2006-2015թթ. ընկած ժամանակահատվածում 7 անգամ հարուցվել է կարգապահական վարույթ անդամավճարի պարտք ունենալու մասով, որոնք՝

- Պալատի Խորհրդի 28.12.2006թ. թիվ 22/7 որոշմամբ ենթարկվել է կարգապահական պատասխանատվության (նկատողություն): Տույժը մարվել է:
- Պալատի Խորհրդի 28.06.2007թ. թիվ 10/8 որոշմամբ կարճվել է (կիրառվել է արտոնություն):
- Պալատի Խորհրդի 23.04.2009թ. թիվ 9/3 որոշմամբ ենթարկվել է կարգապահական պատասխանատվության (նկատողություն): Տույժը մարվել է:
- Պալատի Խորհրդի 20.01.2010թ. թիվ 1/4 որոշմամբ ենթարկվել է կարգապահական պատասխանատվության (խիստ նկատողություն): Տույժը մարվել է:
- Պալատի Խորհրդի 18.03.2010թ. թիվ 6/2 որոշմամբ ենթարկվել է կարգապահական պատասխանատվության (խիստ նկատողություն): Տույժը մարվել է:
- Պալատի Խորհրդի 02.04.2012թ. թիվ 1/12003 ԿԳ որոշմամբ կարճվել է (կիրառվել է արտոնություն):
- Պալատի Խորհրդի 28.09.2015թ. թիվ ԿԳ/128-Ա որոշմամբ ենթարկվել է կարգապահական պատասխանատվության (նկատողություն): Ուժի մեջ մտած չէ:

6. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը.

Հիմք ընդունելով Պալատի խորհրդի կողմից հաստատված փաստերը, դրանք հիմնավորող գործում առկա ապացույցները և քննարկվող իրավահարաբերությունները կարգավորող կանոնները, Պալատի խորհուրդը գտնում է, որ փաստաբան Խանում

Մկրտչյանին պետք է ենթարկել կարգապահական պատասխանատվության, հետևյալ պարճառաբանությամբ.

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ պարբերության համաձայն՝ Փաստաբանը փաստաբանների պալատի սահմանած չափով և կարգով մուծում է անդամավճար՝ փաստաբանների պալատի ընդհանուր պահանջների և փաստաբանական գործունեության իրականացման հետ կապված այլ ծախսերի համար: Նույն օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի համաձայն՝ փաստաբանը պարտավոր է մուծել անդամավճարներ:

Համաձայն «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 2.9.1. կետի՝ «Փաստաբանը պարտավոր է սահմանված կարգով և չափով Պալատին վճարել անդամավճար:»:

Համաձայն ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 26.12.2013թ.-ին թիվ 33/6-Լ որոշմամբ ընդունված «Անդամավճարների, մուտքի և այլ վճարների վճարումների վերաբերյալ» կարգի (այսուհետև Կարգ) 7-րդ կետի՝ Փաստաբանները յուրաքանչյուր ամսվա համար անդամավճարների վճարումը կատարում են հաշվետու ամսվան հաջորդող ամսվա մինչև տասնհինգը, իսկ նույն Կարգի 21-րդ կետով սահմանվում է՝ «Ամենամսյա վճար վճարելու պարտականությունը խախտելու համար փաստաբանը կամ օգնականը ենթակա են կարգապահական պատասխանատվության:»:

Վերոնշյալ նորմերի վերլուծությունից հետևում է, որ սահմանված ժամկետներում անդամավճար չվճարելու համար փաստաբանն ենթակա է պատասխանատվության:

Փաստաբան Խանում Մկրտչյանը խախտել է վերը նշված նորմերի պահանջները, որն ապացուցվում է գործում առկա՝ ՀՀ փաստաբանների պալատի գլխավոր հաշվապահի կողմից 18.07.2015թ. և 16.10.2015թ. տրամադրված տեղեկանքներով: Ավելին, կարգապահական վարույթ հարուցելուց հետո էլ Խանում Մկրտչյանը շարունակել է խախտել վերը նշված նորմերի պահանջները և կարգապահական վարույթը Խորհրդում լսվելու ժամանակ էլ վերը նշված խախտումն առկա էր: Միաժամանակ, Խորհուրդն արձանագրում է, որ Խանում Մկրտչյանը բազմիցս ենթարկվել է կարգապահական պատասխանատվության անդամավճար չվճարելու համար, սակայն այն ևս չի նպաստել նրան, որ Խանում Մկրտչյանը փոխի իր վարքագիծը և չխախտի ՀՀ օրենսդրության, ինչպես նաև Պալատի ներքին իրավական ակտերի պահանջները:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 5-րդ մասի 14-րդ կետի, 39-րդ հոդվածի 1-ին մասի, 39.7. հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի, 39.9. հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության» 16.26-րդ կետի, «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 30-րդ հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի պահանջներով Խորհուրդը՝

Ո Ր Ո Շ Ե Ց՝

1. Փաստաբան Խանում Մկրտչյանին (արտոնագիր թիվ 278) ճանաչել մեղավոր «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 2.9.1. կետի պահանջների խախտման համար:

2. Փաստաբան Խանում Մկրտչյանի (արտոնագիր թիվ 278) նկատմամբ կիրառել կարգապահական տույժ՝ խիստ նկատողություն:

3. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշման մասին հրազեկել փաստաբան Խանում Մկրտչյանին:

Ծանոթություն. *Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում: Սույն որոշումն օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:*

**ՀՀ փաստաբանների պալատի
խորհրդի նիստը նախագահող՝**

Մարտուն Փանոսյան